քայի գերեզմանն էլ Հոգեաց վանքումն է. մինչ-դեռ Խորենացու պատմածը միայն խաչի մասին է, որ դրուել է Տրդատայ գերեզմանի վերայ առանց յայտնելու թէ ուր է այդ գերեզմանը։ Ուր Ս. Տրդատի մարմինը թաղուել է Ս. Գրիգորի մօտ Թորդան աւանում, այդ յայտնում է մեզ Փաւստոսից զատ և այն հատուածը, որ համարուում է Մ. Խորենացու պատմութեան մասն և որի մէջ նկարագրուած է Տրդատ արքայի մահն և յուղարկաւորութիւնը (Բամվէպ, 1851). այդ հատուածի մէջ պարզ նշանակուած է, որ ս. թագաւորի մարմինը տարան «ի Թորդան» և «թաղեցին զնա ի տեղւոջ զբօսանաց մեծին Գրիգորի, զոր պարսպեալ անուանեաց իւր պարտէզ» (Այրարատ, 392)։ Ս. Տրդատի գերեզմանն Հոգեաց վանքում գտնուելու աւանդութիւնն, անշուշտ, շատ ուշ է կազմուել և այն թերևս այն պատճառով, որ Ցայսմաւուրքի մէջ յիշատակութիւն կայ թէ «յետոյ տարան գաղտաբար ի Հոգւոց վանք Ս. Աստուածածնի» (Այրար. 333)։ Հոգեաց վանքում գտնուիլն աւելի յետին դարերի յիշատակարանների մէջ է յիշուում, որոնք սակայն այնքան վստահալի չեն. Վարդանի անունով յայտնի աշխարհագրութեան մէջ, զորօրինակ, այսպիսի բան կայ. Ըռշտունիք Ոստան է, ուր կայ սուրբ ուխտն Հոգոց վանքն, ուր կայ կենդանագիր պատկերն Տիրամայր Ս. Աստուածածնին, զոր